ԱԳՐՈՃԱՄԲԱՐԻ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆՆԵՐ

Ճամբարի մասնակիցները պետք է՝

- Հետևեն անվտանգության բոլոր կանոններին ու հրահանգներին:
- Բաց լինեն նոր գաղափարների համար, լսեն և հարգեն մյուսների տեսակետները:
- Հարգանքով վերաբերվեն միմյանց, չծաղրեն և չօգտագործեն անհարգալից բառեր, չկատարեն արարքներ, որոնք կարող են վնաս հասցնել մյուսներին:
- Ենթարկվեն դասավանդողների ու ջոկատավարների հրահանգներին:
- Ճամբարի ամբողջ ժամանակահատվածում ակտիվորեն մասնակցեն բոլոր միջոցառումներին:
- Կրեն հարմարավետ հագուստ և կոշիկներ, որոնք անվտանգ կլինեն նաև վազելու և խաղերին մասնակցելու համար:
- Տարաձայնությունները լուծեն միմյանց հետ հաղորդակցվելու միջոցով:
- Խնդիրների առկայության դեպքում անմիջապես դիմեն կազմակերպիչներին:

Խստիվ արգելվում է՝

- **Կրել, օգտագործել կամ ուրիշներին բաժանել ծխախոտ, ոգելից խմիչք և դեղամիջոցներ, որոնք նշանակված չեն բժշկի կողմից:**
- **Կրել կամ օգտագործել սուր, կտրող, ծակող իրեր և պայթուցիկ նյութեր, որոնք կարող են վնաս հասցնել իրենց կամ այլ մասնակիցներին:**
- **Վերցնել այլ մասնակիցների իրերն առանց թույլտվության:**

Ճամբարի վարքագծի կանոններին չհետևելու, անհարգալից վերաբերմունք կամ վարքագիծ ցուցաբերելու դեպքում կազմակերպիչները կարող են մասնակցին հեռացնել ճամբարից: Ճամբարից հեռացնելու դեպքում մասնակցության գումարը ետ չի վերադարձվում:

Ստորև ստորագրելով՝ ճամբարականը համաձայնվում և երաշխավորում է, որ կհետևի ճամբարի վարքագծի կանոններին:

Երեխայի անուն, ազգանուն ----------

Երեխայի ստորագրություն ----------

Սույնով հաստատում եմ, որ իմ երեխան իմ ցանկությամբ է մասնակցում ամառային ճամբարին: Ես կարդացել և ընդունում եմ ճամբարի վարքագծի կանոնները և դրանք հստակ բացատրել եմ իմ երեխային: Ես գիտակցում եմ, որ ճամբարում ապահովված է ընդհանուր անվտանգությունը, բայց նաև բացատրել եմ իմ երեխային ճամբարի վարքագծի կանոններին հետևելու կարևորության մասին, որը կնպաստի իր և այլ մասնակցի անվտանգության ապահովմանը:

Ծնողի անուն, ազգանուն ----------

Ծնողի ստորագրություն ----------

Ամսաթիվ ----------